

4. Ինչ վերաբերում է բնակավայրային համայնքին, ապա այն համեմատաբար նվազ շահով է ուսումնասիրված հայ մասնագիտական գրականության մեջ /Մտ. Մնացականյան, է. Մելքոնյան/, ուստի պատահական է, որ այս բնագավառն արտացոլող նյութերը, հետազոտման սկզբունքներն ու բնութագրումները որոշակիորեն թերի են: Դա մասնավորապես վերաբերում է բնակավայրերի տիպերի ու ձևերի սահմանումներին, բնա-էկոլոգիկ, սոցիալ-տնտեսական, կենսադա-մշակութային կտրվածքներին դասակարգումներին և հարակից մի շարք այլ հարցերին: Ըստ այդմ համաշխարհային ուսումնասիրված շայտասանի տարբեր պատմա-ազգագրական շրջանները թե տարածական և թե ժամանակագրական առումով:

5. Եվսևրում վերոգրեյալից և գիտությունների գաղափարներից, հրատարակողը է դարձել բնակավայրային և բնակավայրային համայնքների համարական ուսումնասիրությունը, որը մեծապես կապատի այդ հետազոտողից յուրաքանչյուրի, նույնպես և դրանց որպես մի միասնական ֆենոմենի խոր ու բազմակողմանի հետազոտմանը, իսկ դա եկնադրում է թե տեսական և մեթոդական սկզբունքների հասակեցում ու կատարելագործում, թե մաշակողական /փաստական/ նոր նյութերի քնն-գրկում, մի բան, որը կրնձեռի և էնվիրոնիկ և վերացարկված մակարդակներով երևույթը դիտարկելու հնարավորություն, ստեղծելու տիպաբանական և գործառական բնույթի նոր համակարգեր:

Մ. Գ. ՏԵՐ-ԳՐԻԳՐՅԱՆ
ԱԼՔ

ՀԱՅ ԼՈՒՍՆԱՎՈՐ ՀԱՄԱՆ ԵՎ ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵՆԵՂՆՑԻՆԵՐՆ
ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿՑԱՆՔՈՒՄ
/XIX դ. վերջ - XX դ. 30-ական թթ./

1. XIX դ. վերջից մինչև XX դ. 30-ական թվականներն ընկած ժամանակաշրջանում ԱՄՆ-ի բողոքական միսիոներական ընկերությունների շնորհիվ ամերիկահայ համայնքում ստեղծվում է կրոնական, կրթական, հասարակական ինստիտուտների լայն ցանց: Այդ տարիներին բողոքականությունը փորձում է ամրացնել իր դիրքերը հայ մշակույթի մեջ:

2. ԱՄՆ-ի հայ գաղթյալների առաջին սերնդի համար հայ բողոքական եկեղեցին ուներ շեշտված հասարակական դեր, քանի որ այն գործոն միջոց էր արագանելու և հեշտացնելու հայ ներգաղթյալների համակերպումն ԱՄՆ-ի ուրույն սոցիալ-քաղաքական պայմաններին, ամերիկահայ մշակույթին, բարքերին: Հայ բողոքական եկեղեցին խթանում էր ամերիկահայերի ուժացման գործընթացը:

3. XX դ. 40-ական թթ. ամերիկահայ հասարակության մեջ լայն տարածում ստացած "Triple Melting Pot" տեսությունն այն մասին, թե ներգաղթյալների լիակատար ուժացման ճանապարհը կրոնական ուժացումն է ԱՄՆ-ի երեք գլխավոր կրոնների՝ բողոքականության, կաթոլիկության, հուդայականության սահմաններում, ժխտվեց հենց այն փաստով, որ 30-ական թվականների սկզբից բողոքականության տարածումն ամերիկահայ համայնքում սահմանափակվում է:

4. Այդ տարիներին մասնակի ուժացման աստիճանին հասած հայ ներգաղթյալների առաջին և երկրորդ սերնդի կարևորագույն խնդիրներից մեկն է դառնում ազգապահպանման հարցը, ուստի նրանց համար ավելի ու ավելի կարևոր նշանակություն են ստանում հայ մշակույթի էթնոտարբերակիչ բնույթ կրող տարրերը: Ամերիկահայ համայնքում բոլորական եկեղեցու ազդեցության թուլացմանը համընթաց ուժեղանում է հայ լուսավորչական եկեղեցու դերը:

5. Հայ լուսավորչական եկեղեցին ազգապահպան կենսունակ միջոց մնալու համար, մասնակիորեն ուժացած ամերիկահայերի հասարակական, մշակութային պահանջները բավարարելու նկատառումով, ստիպված էր հորմարվել ԱՄՆ-ի սոցիալ-քաղաքական պայմաններին, ամերիկյան մշակույթին և բարբերին: Այդ է պատճառը, որ ԱՄՆ-ի հայ լուսավորչական եկեղեցին, պահպանելով լուսավորչական կրոնի բուն էությունը, կարևոր ծիսակատարողական, պաշտամունքային առանձնահատկությունները, որոշ փոփոխություններ է մտցնում իր ծիսա-արարողական, կազմակերպչական նկարագրի մեջ: Շեշտվում է հայ լուսավորչական եկեղեցու աշխարհիկ, հասարակական-քաղաքական դերն ամերիկահայության կյանքում:

Փ. Խ. ՏԵՐ-ՄԱՐ ՏԻՐՈՍՈՎ

ՀԱԻ

„ԱՐՋԻ ՈՐՂԻՆ,“ ՀԵՔԻԱԹԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ,
ԿԱՌՈՒԹՎԱԾՔՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Հնագիտական, ազգագրական, բանահյուսական ու բանասիրական նյութերի դիտարկումը հնարավորություն է քնննել բացահայտելու հին Հայաստանում արժի պաշտամունքի բնույթը՝ որպես ստորգետնյա աստվածություն, որ կապված է մեռնող ու հառնող բնության պաշտման հետ /տես իմ² Արժի պաշտամունքը հին Հայաստանում, թեգիս-ները, Երևան, 1984/:

2. Ներկա գեղուցման քննարկման նյութ է „Արժի որդին,“ հեքիաթը, որի սյուժեն առկա է Եվրոպայի, Ռուսաստանի, Աիբիի ժողովրդական հեքիաթներում և ուսումնասիրված է բանագետների ու լեզվաբանների կողմից: Ուսումնասիրողները գտնում են, որ այդ սյուժեն արտացոլում է արժի պաշտման առկայությունը հնդեվրոպացիների մեջ ակապին հնագույն ժամանակներում /de Vries S., Beek H., Иванов В.В., Топоров В.Н./:

3. Եվրոպայում և Ռուսաստանում գրանցված „Արժի որդին,“ հե-